ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-19/18» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

ք.Գավառ «25» հուլիսի 2019թ.

ժամը 12:00-ին

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Գ.Բոշյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Խաչատրյան, Ա.Բադալյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Մելքոնյան

«ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-19/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի մասին

Գ.Բոշյան

1) Սույն թվականի հուլիսի 24-ին ՊԵԿ-ի կողմից ստացված տեղեկատվության հիման վրա պարզ դարձավ, որ «Ատաստ Ֆուդ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Արմեն Հովեյանի ներկայացրած հայտերում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ /հայտը ներկայացելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով առկա են ժամկետանց պարտավորություններ/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Հիմք ընդունելով վերը նշվածը և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը որոշեց «Ատաստ Ֆուդ» ՍՊԸ-ին և Ա/Ձ Արմեն Հովեյանին առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակի ստացմանն հաջորդող աշխատանքային օրը, ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12, երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Գ.ԲՈՇՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ԲԱԴԱԼՅԱՆ
		Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ՄԵԼՔՈՆՅԱՆ